

Թիւ 24449
Շեարուար 4, 1975

Արժանաշնորհ
Տ. Գէորգ ԼճՆՅ. Առաքելեան
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Սկեղեցւոյ
Նախագահ ծիսական Խորհուրդի
Պինկհամթըն, Ն.Յ.

Սիրելի Տէր Գէորգ,

Առացած ենք Յունուար 28, 1975 թուակիր տեղեկագիրը, որով կը հա-
ղորդուի թէ Ձեր նախագահութեամբ Յունուար 19ին գումարուած համայնքիդ
ծիսական ժողովին մէջ կատարուած է ծիսական Խորհուրդի երեք անդամոց ընա-
րութիւնը, եւ ներկայացուելով բուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրուի
ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ծիսական ժողովը տեղի ունեցած է Թեմական
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ծիս-
կան Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել ծիսական Խորհուրդի նորընտիր
Գիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծիսական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս. Սկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԸՆԳԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Ճան Պաղտասարեան
Նշան Լեւոնեան
Անուշ Տէօքմէճեան